



## ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՏՈՆԵՐԸ

(Պատմական-մատենագրական տեղեկություններ Խաչվերացի տոնի առքիվ)



Երուսական գլխավոր տոների, այն է՝ Աստվածաշայտնության, Պայծառակերպության և Հարության տոների հետ, որոնցով Եկեղեցին պանծացնում է Քրիստոսի տօնի տնօրինությունն ու նրա կյանքին վերաբերյալ խորհրդավոր հիշատակները, «տերունական հիշատակներ» անվան տակ տոնվում են նաև Եկեղեցու և Խաչի տոները, որոնք նույնպես համարվում են տերունական տոներ, որովհետև սերտորեն առնվում են, ըստ Եկեղեցու ուսուցման, Քրիկագործության խորհրդի հետ, Եկեղեցին Խաչն ընկալում է որպես գործիք Քրիկագործության, իսկ Եկեղեցին ինքը համարվում է արքասիքը, արդյունքը Քրիկագործության, այսինքն Քրիստոսի արյունով Քրիկացների ժողով։

Շատ վաղուց, Քրիստոնեական զգացմունքների և հավատի համար, Քրիստոսի խաչը եղել է շերմ հարգանքի և պատվի առարկա։ Քրիստոս, որպես «պատարագ և զենումն Աստուծոյ» (Եփես. ե 2), մահացալ խաչի վրա «վասն մեր» և այդ օրվանից խաչը հոչակվեց դրոշն ու պարծանքը Եկեղեցու և հավատացյալների, միաժամանակ նաև Քրիստոնեական կյանքի կենդանության, զորության և հավերժության խորհրդանքան։

Հստ Քրիստոնեական ուսուցման՝ Խաչը ապրված, խտացված Ավետարանն է, Քրիստոս իր հետևորդներից առաջինը պահանջում է, հասնելու համար ճշմարտության և Քրիկության, ուրանալ անձը, վերցնե, խաչը

և հետևել իրեն. «Որ ո՞չ առնու զիմալ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի» (Մատթ. Ժ 28, Ժ 24, Մարկ. Ղ 34, Ժ 21, Ղուկ. Ի 23):

Խաչը խորհրդի, «Խաչի ճառա-ի մեջ է բովանդակվում, ըստ Պողոս առաքյալի ուսուցման, Քրիստոնեական կրոնի կենսունակությունը, զորությունն ու հմայքը. «զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ Քրիկելոցն մեզ՝ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18); Խաչը, հավատացյալ մարդու համար, որպես Քրիկագործության խորհրդանշան, իր մեջ է խտացնում Քրիստոնեական սերը, աստվածային գերագույն զոհողությունը և Քրիստոնեական բարոյականի ամբողջ խորհուրդը։ Այս իմաստով, Եկեղեցու մեծ և լուսամիտ մատենագիրները, քարոզիչները խաչն իր խորհրդով համարել են «վսեմ ամփոփումը Քրիստոնեական կրոնի»։ Հավատացյալը չի կարող լիապես ըմբռնել Քրիստոնեական կրոնի Քրիկարար էլությունը, նրա մարդասիրական, խաղաղասիրական ոգին, մինչև որ լուսավորված Այնի խաչի՝ այն է հանուն բարձր գաղափարների հանձն առնված զոհողության, զրկանքների և նահատակության գաղափարներով։

Պողոս առաքյալը, խտացնելով խաչի բարյական, հոգեկան արժեքը Քրիստոնյա մարդու համար, գրում է. «այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի» (Գաղատ. Զ 14)։ Այս նույն մտածմամբ և զգացմունքով տոգորված, առաջին Քրիս-

տոնյաները, ապա Եկեղեցու սրբերն ու նահատակները, գոտեանդված «զօրութեամբն խաչին», իրենց կյանքով և արյունով ամրապնդեցին Քրիստոնեական Եկեղեցու հիմքերը, «իրենց աներկևան հավատքին զորության խարիսխ հաստատեցին և իրենց զյուցաղնական արիության համար կապեցին [խաչի] այդ նշանը, անոր մեջ խտացված զալով հավատքի, հույսի և սիրո առաքինությանց լրում» (Թորգոմ արքեպիսկոպոս, «Սիոն», 1933 թ., № 10, էջ 299):

Եկեղեցու սրբերի, նահատակների և հավատացյաների համար խաչով էր պատկերվում Քրիստոսի կյանքը, նրա քարոզության ճշմարտացիությունն ու կենսունակությունը: Եկեղեցին միշտ ապավինել է Քրիստոսի խաչի զորության, օգնգության: «Եպափինեցաք ի խաչ քո», — երգում է մեր շարականագիրը: Խաչի խորհուրդն էր, որ հավատացյաների հոգում և մտքում զորացնում, բոցավառում էր քրիստոնեական հավատի և զոհողության սրբազն հուրը, մարդասիրության զգացմունքները և խաղողության ձգումը:

Քրիստոսի խաչելությունից հետո, պատժի և մահվան անարդ գործիք հանդիսացող խաչը Քրիստոսով սրբացավ, գեղեցկացավ և դարձավ հավատավոր ժողովրդի հարգանքի և երկրպագության առարկան, իր խորհրդով և նշանակությամբ:

Խաչը խորհրդանշանն է տառապանքի, զոհողության՝ հանուն վեհ սկզբունքների: Խակ տառապանքն է, որ կատարելագործում, ազնվացնում, սրբացնում է մարդկանց և հավաքականություններին: Տառապանքի, արցունքի մեջ է, որ ծնվում են գեղեցկությունն ու հերոսությունը, հոգեկան, բարոյական, իմացական արժեքներն ու սրբությունները: Զեա ոչ մի գեղեցկություն առանց զոհողության, աշխատանքի, տառապանքի: Խակ Քրիստոսի խաչը խորհրդանշանն է տառապանքի, կրված հանուն հավատացյալ մարդու երջանկության, հոգու խաղաղության:

Եկեղեցին իր գոյությունը պարտական է մանավանդ խաչի զորության, խաչի խորհրդին. «գի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոց մեջ՝ զօրութիւն Աստուծոյ... մեք քարոզեսցուք զիաշելեալն Քրիստոս... Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն» (Ա. Կորնթ. Ա. 18, 23, 24):

Խաչը Եկեղեցու համար եղել է զորության, կյանքի նշան և ներշնչարան: Այդ զգացմամբ երգում է «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից, այսօր պատկեաց զքեղ խաչին իւրով»:

Այս գաղափարների լույսի տակ, Եկեղեցին, շատ վաղուց, իր Տոնացուցում նշանակել է Խաչի մի շարք տոներ:

1. «Տօն Վերացման Ս. Խաչի»: — Այս տոնը քրիստոնեական մյուս Եկեղեցիները տոնում են սեպտեմբերի 14-ին, անշարժ կերպով, իսկ մեր Եկեղեցին՝ սեպտեմբերի 14-ի մերձավոր կիրակին, «ըստ Հանրական սովորության, որով գերեւելի տօնս տէրունականս ի կիւրակէ օր սահմանեալ կատարէին, նոյնակէս զտոնն Խաչվերացին զետեղեցին ի կիւրակէն, որ հանդիպի երբեմն ի 1-է սեպտեմբերի և երբեմն յառաջ քան զայն» (Հ. Գարդիել Ավետիքյան, «Բացատրութիւն շարականաց», Վենետիկ, 1814 թ., էջ 504):

Վերացման կամ խաչի բարձրացման տոնի մասին Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ հիշատակվում են երեք պատմական դեպքեր. «Պատճառ տօնին վերացման խաչին՝ յումանց կարծի լինել երևումն նշանի խաչին եղեալ առ մեծն Կոստանդիանոս ի պատերազմելն ընդ գթաց, զոր և նա դրօշակ արարեալ զօրաց իւրոց յաղթեաց թըշնամեաց. ի յիշատակ այսր կարգեցաւ ասեն տօնն Խաչվերացի: Այլք ասեն սահմանեալ ի յիշատակ գիւտի պատուական խաչին ձեռամբ Հեղինեայ թագուհուլ» (Ավետիքյան, էջ 504):

Հայոց Եկեղեցին Խաչվերացի տոնին պահացնում է Հիմնականում խաչի գերեգարձի հիշատակը:

610 թվականին պարսից Խոսրով թագավորը պատերազմ է Հոշակում Բյումզանդիայի դեմ և առաջին տարիներին պարտության մատնելով հույսներին, 614 թվականի ապրիլին գրավում է երուսաղեմը: «Երուսաղեմի ավարին հետ գրավվեցավ խաչափայտն ալ, և գերիներու հետ տարվեցան Զաքարիա պատրիարքը և բազմաթիվ Եկեղեցականներ» (Օրմանյան, «Աղքապատում», Ա, էջ 651): Քրիստոնեական ողջ աշխարհը հուզվում է այդ դեպքից կազմվում է խաչակրաց նոր արշավանք պարսիկների դեմ: Նոր կայսր Հերակլը զորագուվ է Հոչակում և ապա մեծ բանակով 627 թվականի գարնան արշավում Խոսրովի վրա: Արշավանքին մասնակցում է նաև ժամանակի Արևմբույն Հայաստանի կյուրապաղատ Մժեթ Գնունին՝ հայկական ուժերով: Խոսրովը շարաշար պարտվում է և սպանվում: 628 թվականին կնքվում է հաշտություն և նույն թվականին խաչը ազատվում է գերությունից:

Քրիստոնյա բազմություններ խաչը բարձրացրած («Վերացեալ») գլուխներից վերև, Թավրիզ—Կարին—Կոստանդնուպոլիս ճանապարհով բերում են երուսաղեմ: Խաչի վերադարձի ճանապարհին ստեղծվում է ան-

նկարագելի ոգևորություն։ Հավատացյալ ժողովուրդը հանդիսավորապես դիմավորում է հաշախայտը և այն ծածկում իր արցունքների և երկուուած պաշտամունքի զերմությամբ։ Առաջ այս է հաշվերացի տոնի պատմական ճշգրիտ Փոնը։

Խաշվերացի տոնը կատարվում է բացառիկ շեղությամբ, մասնավանդ մեր Եկեղեցում, ըստ մեր Տոնացուցի, ուր կա «Կանոն Վերացման Սրբոյ Խաչինց Տոնից առաջ շաբաթապահ» է, շարաթ օրը՝ «Տօն Սրբոյ Եկեղեցու ի նաւակատիս Սրբոյ Խաչին»։ Իսկ «ի գիշերին հսկումն է»։ Առավոտյան ժամերգության վերջում կատարվում է Քրիստոսի թաղման կարգը՝ «Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք և զուրբ զթաղումդ քո փառաւորեմք»։ Ապա հանդիսավոր սուրբ պատարագ է ժամուցում, որովհետև Խաշվերացի տոնը Եկեղեցական մեծ տոն է, հինգ տաղավարներից՝ մեկը՝ Երեկոյան՝ թափոր Խաչվերացի։

Օրվա՝ կանոնը հրահանգում է «յառաջ քան վերեկոյին ժամն՝ դիցեն արծաթի սկտեղմ զսուրբ խաչն (որ ունի զմասն ինչ ի Խաչափայտէն)»։ և զարդարեսցեն զնառհանով և վարդեղէն ջրով և ծածկեցնեն պատուական կտաւով («Տօնացոյց», Վաղարշապատ, 1906 թ., էջ 156)։ Ապա սկսվում է Խաշվերացի թափոր-անդաստանը տաճարի բակում, որից հետո, հրահանգում է կանոնը, «ի թափոր մի՛ ևս ելցեն մինչև ի Տեսպնընդադաշն և անտի ի Սաղկագարդն» (նույն տեղում, էջ 160)։

Խաշվերացի Անդաստանին նախագահում է թեմի եպիսկոպոսը՝ կամ ադազնորդ վարդապետը, ապա՝ Եկեղեցական թափորը, «Հանդերձ քահանայիր և սարկաւագօք, երթիցեն քորվառութը, լապտերօք և քշցօք առ սուրբ խաչն, և երկու աւագերէցը վերցանացեն սկուանդամբ զսուրբ խաչն բարձրագույն և գոյերկոսքն սպասաւորեսցեն շուրջանակի»։ Այսուհետև սաղմոսերգությամբ, շարականներով և սուրբգրական համապատասխան ընթերցումներով սուրբ խաչը բերվում է վանքի կամ տաճարի բակը և եպիսկոպոսը, «առեսալ զսուրբ խաչն ի քահանայէն, բարձրացուցեալ՝ տեղանագրեսցէ ասելով»։ «Օրհնեսցի» և պահպանեսցի՝ և նախահնամեալ պահեսցի արևելյան կողմն աշխարհիս և Հայրապետություն Հայոց։ Նույն ձևով հանդիսադիրը Անդաստանի ժամանակ հոգևորականության մասնակցությամբ օրհնում է «արևմտյան կողմն աշխարհիս».. և ամենայն ժողովուրդը քրիստոնէից», «հարաւային կողմն աշխարհիս, երկիրս, անդաստանս, այգիս և պտղաբե-

րութիւն տարւոյս», «հիւսիսային կողմն աշխարհիս, վանք, անապատը և ամենայն եկեղեցիք Հայոց, հանգերձ Եկեղեցականօք կեղեցիք Հայոց, հանգերձ Եկեղեցականօք կեղեցիք կիցիցին ի շնութեան, ի բարեկարգութեան»։

Անդաստանից հետո, Եկեղեցական թափորով, սուրբ խաչը նորից բերվում է տաճար և «դիցեն զսուրբ խաչն և զնաւտարանն երկիր պագի վերայ խորանի յատեանն և երկիր պագի ցեն ամենեքեան»։

Այսուհետև 8 օր Խաչի և Եկեղեցու տոն է նշում Տոնացուցը (էջ 160—163)։ Հատուկ «Օրհնութիւն»-ներով, «Հարց»-երով, «Տէրյարկնից»-ներով (տե՛ս նաև «Զայնքաղ Եարական», Վաղարշապատ, 1888, էջ 367—392)։

Խաշվերացի տոնի առթիվ իրապես բացառիկ և զուտ հայկական հանդիսության մասին Թորգոն արքեպիսկոպոս Գոշակյանը գրում է հետեւյալ հատկանշական տողերը. «Հավանական է, որ այս հանդիսավորությունը շափով մը գեթ արդյունքը լինի այն տպավորության՝ զոր խաչափայտին գերեղարձը գործեց հայության սրտին վրա՝ Հայաստաննեն անցված միջոցին։ Կարնողաշտին հարավ-արևելյան կողմը բարձրացող լեռներուն մեծ գագաթը Խաչափայտ կողմէ մինչև վերջերը։ Այդ լեռն սարահարթին վրա, որ 9000 ոտք բարձրություն ունի, կրխի սառնորակ զուր մը, որ նույն ամեն ուխտավայր է։

Տեղական ավանդությունն մը կպատմեր, թե պարսիկները խաչը հանձնելի վերը, զըղշալով, նորեն հարձակիլի փորձած՝ են ետանելու համար զայն։ Հայերը, խաչափայտը՝ այսուհետ թողով, իրենց ամբողջ ուժով վանած են հարձակումը, ու վերապարծին տեսած են, որ խաչին հանգեցցված տեղեն բիսած է այդ վճիտ չուրը։ Նույն լեռներու ստորոտը կար Խաչի վանք մը, ուր Խաշվերացի ատեն ուխտավորություն կկատարվեր» («Սուրբք և տօնք», էջ 317—318)։

Մեր Հարակնոցի գոհարներն են Խաչի շարականները, որոնք շատ գեղեցիկ են իրենք բովանդակություն և ձեւ, պատկերավոր, ոկմիմիկ և հանդիսավոր. «տասանեինը դարեր երգեր ենք անոր (Խաչին) խորհուրդն ու փառքը, ինչպես անոր զգացումն ու ձեզ բնաղբարեն կարծես ամեննեն հիմնական ժողովը (Հորինանյութ) դարձեր է մեր գրականության ու գեղարվեստին։ Կարելի պիտի ըլլար թանգարան մը ամբողջ լեցնել նմուշ-ներով բյուրապատիկ խաչերուն, որոնք, իրը քանդակ կամ իրը զարդ, հոգուր ներշնչումի օծությամբ լցուցած էին մեր սրբավագիրեր և գրագիրները, ազգային ճարտարագետները և մատենագրության մեծ

ու փոքր հիշատակարանները» (Թորգոմ պատրիարք, «Միոն», 1933, № 10,էջ 299):

Նոյն մտածումներով և գգացմունքներով,  
շնորհակի բանաստեղծ Զավեն Սյուրմելյանը  
գրում էր, որ մեր հին Հայրենիքը «իսաւթա-  
րերու սուլրը աշխարհ մըն է»:

Խաչվերացի առաջին օրվա կանոնն է շաբական աձ, «Որ զանարատ բագուկս քո» (*«Զայնքաղ Շարական»*, էջ 367): Այս գեղեցիկ շարականի հեղինակն է Համարվում է դարի նշանավոր մատենագիր և աստվածաբան Թեոդորոս Քոթենավորի աշակերտ Սահակ Զորափորեցի կաթողիկոսը (677—703 թ. թ.), «որ գնաց ընդդիմ տաճկաց» (*«Զայնքաղ Շարական»*, էջ 3): Զորափորեցուն են վերագրվում նաև Խաչի մի շարք կանոններ, ինչպես նաև «Եկեղեցւոյ», Կենդանագիր անարատն և Տէր երկնից՝ որ զարդարեաց» (էջ 3):

Ակադեմիկոս Մանուկյանը և բարձր  
է գնահատում ընդհանրապես Խաչի  
շարականների բանաստեղծական թափը,  
պատկերավորությունն ու հուզականությու-  
նը. «Խաչի երգերի մեջ կան մի քանի այն-  
պիսիները, որոնք գեղեցիկ են իրենց խրա-  
խոսական աշխուժով. Խաչի հավատը շատ  
չերմ է եղել, մանավանդ 7-րդ և 8-րդ դա-  
րբերում, երբ Հայոց երկիրը զարդարում  
էին խաչարձաններով: Ուստի բանաստեղծի  
սրտից թոշում են առ խաչը ոգևորության  
խոսքեր, որոնք լի են հափշտակիչ քարա-  
կանությամբ» («Հայոց հին գրականության  
պատմություն», Ա, Երևան, 1944 թ., էջ  
500—501):

Հպգեկրոն հայ բանաստեղծը խալը երգում  
է որպես «նշան յաղթութեան ընդդէմ թշշ-  
նամւոյն», «զէն յաղթութեան», «անյաղթելի  
նշան անպարտելի զօրութեան») «Զայնքաղ  
շարական», էջ 364, 367): Խալը երգում է  
նաև որպես «օգնական հասատացելոց» (էջ  
367): Խալը շարականների մեջ երգվել է  
նաև խորհրդանշանական ձևով, որպես Մով-  
սես մարգարեի «գաաազան», «որ զանդունդո  
մեղաց ծովու սովալ բաժանեցեր և զբոնաւորն  
ծածկեցեր խորօքն յափտենական հրովար» (էջ 388): Շարականների մեջ խալը համե-  
մատվում է նաև Դրախտի «գիտութեան  
ծառ»-ի հետ, որ «զմեզ ի կենացն հանեալ  
արտաքսեցյց» (էջ 374), «իմկ փայտ խաչի  
քո կենսատու գաաազան զօրութեան կենադ  
մարդկան և յոյս հաստատութեան» (էջ  
374), «յոյս և ապաէն ազգի մարդկան»  
(էջ 391): Խալը միաժամանակ երգվում է նաև  
որպես «մորենի վառեալ որ ոչ այրէր», Զա-  
քարիա մարգարեի տեսած «աշտարակ ու-  
կի եօթնազահեան լուսով», «Սաբեկայ ծառ»,  
Մովսեսի անապատում բարձրագործ առնձի

օձը, սրբութեան սեղան, աթոռ տերունյան, արքայութեան բանալի, անապատում իսրայելացիներին առաջնորդող լուսեղեն ամպ (տե՛ս նաև Մ. Աբեղյան, հիշված աշխատությունը, էջ 499—500):

Խաչվերացի տոնը մեր հինգ տաղակարներից վերջինն է, ունի իր նախընթաց պահը; Նավակատիքը, մեռելոց հիշատակը և յոթնորեքը:

2. «Գիւտ Խաչի»-ն, ըստ *Spirnawgnyan*,  
Խաչի երկրորդ մեծ տոնն է:

313 թվականին, Միլանոյի հրովարտակով, Հռոմեական կայսրության մեջ հեթանոսական կրոնի կողքին թույլատրվեց նաև քրիստոնեության քարոզությունը: Եկեղեցին, 300 տարի հալածվելուց հետո, ազատ շռնչ քաշեց: Կայսրության մեջ ստեղծվեց ուխտավորական ուժեղ հոսանք դեպի Պաղեստին, տեսնելու, համբուրելու տերունական վայրերը, ինչպիսիք էին Քրիստոսի ծննդյան այրը Քեթղեհեմում, չարչարանաց վայրերը, խաչելության, հարության և համբարձման տեղերը Երուսաղեմում:

Ովստի գնաց նաև Կոստանդիիանոս կայսեր (313—336 թ. թ.) մայրը՝ Հեղինե թագուհին, շատերի հետ։ Պաղստինում և հատկապես Երուսաղեմում, տնօրինական տեղերում քրիստոնեական առաջին մատուցների և եկեղեցիների շինությունը պատմականորեն կապվում է Հեղինե թագուհու անվան հետ, բայց քրիստոնեական առաջին մատենագիրների և պատմիչների։ Աստվածասեր և բարեպաշտ թագուհին Երուսաղեմում հետաքրքրվում է նաև Քրիստոսի Խաչափայտի հարցով, որը թաքցվել էր «առ ատելութեան, ընդ երկրաւ», և «մեծաւ գոյնակութեամբ եզիտ զիաշն աստուածային և լցաւ անճառ ցնծութեամբ» (Հովհաննես Վարդապետ Երուսաղեմացի, «Դիրք պատմութեան Ս. Եռուսաղէմի», 1782 թ., կ. Պոլիս, էջ 163):

Ընդհանուր եկեղեցական պատմովիյան  
մեջ Խաչի գլուխի թշականն է ընդունված  
327-ու:

Այնուհետև եպիսկոպոսները, բավարարելու համար հավաքվածների կրոնական զերմենանդությունը, որոշում են Խաչափայտը

յասունքների վերածել և բաշխել եկեղեցիներին, ինչպես վկայում է Կյուրեղ Երուաղեմացին իր «Կոլում ընծայութեան» գրքում (Կ. Պոլս, 1727 թ., էջ 19): Խաչափայտի մեծագույն կտորը գոլգոտքանքով պահպում է Երուաղեմի եկեղեցում, ուսկզ և թանագին քարերով ագուցված, և շայանմանակէ հանդիսաւոր տօն կատարէ եկեղեցին Երուաղեմի ամի ամիս, ըստ Սոզոմենոս պատմիչի (տե՛ս «Քացատրութիւն շարականաց», էջ 503):

Մեր եկեղեցին խաչի գյուտի տոնը կատարում է հոկտեմբեր 26-ի մերձավոր կիրակին, այսօթներորդ կիրակիի խաչերացիս: Հուկումերը Գյուտ խաչի հատուկ տոն չունեն. այն միացրել են Վերացման խաչի տոնի հետ և կատարում են սեպտեմբերի 14-ին: Կաթողիկոներն ունեն Գյուտ խաչի տոնը: «Հեղինէ առաքեալ կամ ընդ իր բերեալ ի Հոռոմ զմասն ինչ խաչի և զետեղեալ յեկեղեցուշ, անդ եղն սկիզբն տօնախմբելոյ զիսալ գիտն» («Քացինութիւն շարականաց», էջ 538): Բայց ստուգ կերպով հիշվում է, որ Կաթոլիկոները Ը դարում հաստատեցին այս տոնը, մայիսի 3-ին (նույն տեղում, էջ 539): Մեր եկեղեցում Գյուտ խաչի տոնը, ամենայն հավանականությամբ, հաստատվել է է դարում, Սահակ Զորափորեցու ժամանակ, հետեւլով շատ հավանաբար Երուաղեմի եկեղեցու սովորության, որովհետև հուկումերը շունեն այդ տոնը, իսկ կաթոլիկոներն այն սահմանել են հայերից հետո: Փաստ է, որ մեր եկեղեցին սերտ հարաբերության մեջ էր Երուաղեմի եկեղեցու հետ: Այս մասին կան պատմական-մատենագրական բազում փաստերի Մինչև անգամ, ըստ հայկական գրույցների, Երուաղեմի Ս. Տեղյաց ավանդական շինության մեջ մեծ դեր են ունեցել և ամենաբարեպաշտ և գիտածափրտ մեծ թագուհին Հեղինէ, կին Արքարու թագաւորին մերոյ, Տրդատ Գ թագավորը, Գրիգոր Լուսավորիչը և Մեծն ներսեսը:

Է դարի մատենագիր Հերապուսեցի Անաստաս վարզապետը իր «Վասն վանորէից Հայոց որ յերուաղեմ» համառոտ աշխատության մեջ դնում է ցուցակը Երուաղեմում և նրա շրջակայրում գտնվող հայկական 70 վանքերի, որոնցից շատերը կառուցվել են ոչ ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի կուսարութիւն (տե՛ս այս մասին նաև Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի, «Ս. Երկրի սրբակայրերի ավանդությունները», Երուաղեմ, 1936 թ., էջ 414, 424):

Գյուտ խաչի շարականների կանոնն է «Հեղաշակերու և զօրեղ փայտ խաչի քո Թրիստոս», որտեղ պատմվում է սովորական կեր-

պով խաչի գյուտի պատմությունը: Հստ հայ շարականագրի՝ հրեաները տառ ատելութեանց, թաքցրել էին ոզանթաքելի գգանձն»: այսինքն Թրիստոսի Խաչափայտը, որը սակայն գտնվում է «մեծասաստ հրամանաւ և փափաքմամբ թագուհույն» («Զայնքաղ Եարական», էջ 395):

3. «Տօն երեման Ս. Խաչի».—Զատկից հետո, Հինանց և կիրակին, մեր եկեղեցին կատարում է խաչի երրորդ տոնը, «Տօն երեման Ս. Խաչի» անունով: Հուկումերը այս տոնը կատարում են մայիսի 7-ին: Կաթոլիկները լունեն այս տոնը:

351 թվականի մայիսի 7-ին, Կյուրեղ Երուաղեմացի հայրապետի (315—386 թ. թ.) ժամանակ, Երուաղեմում, օրը-ցերեկով, երեսում է երկնքի վրա խաչի մի հրաշալի լուսանշան, «Գողգոթային մինչև Զիթենյաց լեռ տարածված խաչանման պայծառությամբ, որ ավելի փայլուն էր քան լուսը: Զայն տեսան ամենքը, ժողովուրդ և կղեր, որոնք եկեղեցի փոփալով գոհություն մատոցին Աստուծու, իրենց պարգևված այս հրաշալի միհիթարության համար: Ժամանակին Երուաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ հատուկ թուղթ մը գրեց Կոստանդնուպոլս Կոստանդ թ կայսեր, որ դատապարված Արիստականությունը վերականգնելով եկեղեցվոր ներքին խաղաղության գեմ մեծ վտանգ մը կպատրաստեր, և ողոքական քաղցր ոճով բայց խստադատ նկատողությամբ մատնանիշ կը ըներ անոր՝ իր Հոր Մեծն Կոստանդիանոսի պաշտպանած դավանության ուղղափառ ճշմարտությունը, միևնույն ատեն այս երեսումն ալ ապացուց մը հանել փորձելով այդ մասին: Այս թուղթին թարգմանությունը կկարդացվի մեր եկեղեցվոր մեջ տոնին օրը, Անդաստանի Ավետարաննեն առաջ» («Սուլրք և տօնք», էջ 319):

Խաչի երեման տոնը, որպես զուտ հիշատակությունը պատմական մի դեպքի, շունի իր մասնավոր շարականի կանոնը:

4. «Տօն Վարազայ Ս. Խաչի».—Խաչի տոների մեջ վերջինն է Վարազա Խաչի տոնը, զուտ ազգային մի տոն, իր սրտառուց ավանդությամբ, հայկական շնչով: Թորգոն պատրիարքը այս տոնը անլանել է Հայկական Խաչի տոնը: «Տեր Խաչին տոնն է ան, վասն զի բոլորովին ազգային հիշատակի մը պահածցումն է» («Սուլրք և տօնք», էջ 320):

Վարազը անունն է Վանա մոտ գտնվող մի սարի: Հստ Խորենացու վկայության («Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865 թ., էջ 640), Ս. Հոփիսիմե կուսի վկից կախված էր Խաչափայտի մասունքից մի խաչ, ոմածեալն տէրունական արեամբու: Հուկումերն այդ

մասունքը միշտ կրում էր իր վզի վրա, իր ուղևրության ժամանակի, եվ երբ մի օր, ընկերների հետ հալածական, սպասատան է գտնում Վարագա լեռան վրա, «վասն կասկածի հալածանաց», կույսը այդ թանկագին սրբությունը ապահով թաքցնում է Վարագա լեռան վրա, ժայռերի մեջ, «հանդէպ Վանի, ի հարաակուտէ լեռինն», և ընկերների հետ իշնում Վարագից և ուղղվում դեպի Վաղարշապատ, երկու քահանաների հսկողության թողնելով այդ թանկագին սրբությունը: «Այս ավանդությունը, — գրում է Օրմանյան սրբազնը, — կենդանի պահված էր Վանի կողմերը, վասնդի Վարագը հաջորդաբար ճնավորներու տեղ եղած է» («Աղքապատում», Ա, էջ 730):

Է դարի կեսերին, ըստ նույն ավանդության, Վարագա լեռան վրա ճգնող Թողիկ անում մի ճգնավորի տեսիլքով հայտնվում է Շոփիսիմե կույսի խաչի տեղը, որ վաղուց մոռացվել էր, պահապան քահանաների մահից հետո: Թողիկը և իր աշակերտ Հովիլը, երկրպագելուց հետո հայտնված խաչին՝ Վարագա Ա. Նշանին, ինչպես նա կոչվում է ժողովրդական բարբառով, պատմում էն եղածի մասին շատերին: Վարագա Ա. Նշանի հայտնությունը մեծ ոգերություն է ստեղծում ամբողջ Վասպուրականում, և ապա Հայաստանում: Ներսես Գ Շինող (640—661 թ. թ.) շտապում է Վարագ, հայտնության վայրը, անվանի հայ իշխան Թեռդորոս Ռշշտունու որդի Վարդ սպարապետի հետ և «եղեղեղությունը ստուգելեն ետքը, մեծահանդես տոնախմբություն կկատարե և Վարագա խաչին երևման հիշատակին տարեկան տոն հհաստատե Հայ Եկեղեցվո մեջ» («Աղքապատում», Ա, էջ 739), մեծեկան ամսի 20-ին, այսինքն հոկտեմբերին, խաչվերացի Գ կիրակին: Վարագա Ա. Նշանի հայտնությունը պատահել է 660 թվականին, ինչպես վկայում է նաև Թովմա Արծրունին, երբ գրում է. «Քամի ունելութեան Տաճկաց պշայկական աշխարհս» («Պատմությին Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852 թ., էջ 398):

Վարագա խաչի տոնի կանոնն է «նշանաւ ամենայաղթ խաչիւ քո Քրիստոս» գեղեցիկ շարականը, վերագրված սովորաբար ներսես Գ կաթողիկոսին:

Եարականի Օրհնության մեջ չկա որևէ ակնարկություն դեպքի մասին, միայն Հարցի առաջին տան մեջ հիշատակվում է, որ «Ալսօր ի լեան Վարագայ» ծագեց ուղյու անձառելի աստուածութեանն» («Ձայնքաղ Շարական», էջ 394): Այստեղ ևս շարականագիրը Վարագա Ա. Նշանի հայտնությունը երգում է որպես «զէն ընդդէմ թշնամւոյն», և Աստուածուց խնդրում՝ «պահպանեա սովաւ գհաւատացեալս»:

Օրմանյան սրբազնը, խորհրդածելով Վարագա Ա. Խաչի զուտ ազգային-եկեղեցական նշանակության մասին, գրում է հետևյալը. «Ինչ ալ կարենա ըսկիլ տեսիլքին մեկնության վրա, և ինչ իմաստ ալ տրվի Ա. Նշան կոչման, որով հայերը սովորեցան անվանել Վարագա Խաչը, իրական եղելություն մըն է, որ Խաչափայտի կտոր մըն էր Վարագա Ա. Նշանը, որ հայոց ազգային բարեպաշտության առարկա եղած է առջի օրին մինչև ցայսօր, և որ ցարդ կպահվի Վանա մեջ, Հրաշալի երկմամբ հայտնված Հոփիսիմեի Խաչափայտը նախ պահվեցավ Վերին Վարագի Եկեղեցին, քիչ ետքը շինվեցան Ներքին Վարագի մեծ վանքը և Ա. Նշանի Եկեղեցին և հոն փոխադրվեցավ Խաչափայտի մասունքը: Խսկ 1021-ին Սենեքերիմ Արծրունի՝ Վասպուրականի թագավորը միասին Սերաստիա փոխադրեց, և Ա. Նշան վանք մըն ալ շինեց, բայց 1026-ին, անոր մահվըն ետքը, նորեն Ներքին Վարագի Եկեղեցին տարիվեցավ: Խսկ 1651 թվին Խոշապի բռնապետներ Չոմար և Սուլեյման՝ վանքին կողոպւտին հետ հափշտակեցին, բայց անոնց արագ և չարաշար մահվընն ետքը հաջորդնին իրրահիմ ետ դարձուց 1655-ին, և այս անգամ վանեցիք ապահովության համար քաղաքին Ա. Տիրամայր Եկեղեցին գրին, որ այնուհետև սկսավ Ա. Նշան կոչվիլ» («Աղքապատում», Ա, էջ 740):

Հստ Թորդում պատրիարքի վկայության, «մինչև վերջերս հոն (այսինքն Վան քաղաքի Ա. Նշան Եկեղեցում) կպահվեր նվիրական այդ մասունքը» («Սուլրաք և տօնք», էջ 323):

Ա. Հ.

